

կ'ուտեն , ու համն ալ կը գովեն . կա-  
շին ու եղջիւրն ալ զանազան բանե-  
րու կը բերեն :

Անգեղջիւրին մէկ տեսակն ալ կայ  
որ երկու եղջիւր կ'ունենայ քթին  
վրայ՝ մէկը մէկալէն պատիկ , և ասի-  
կայ Ացրիկէ միայն կը գտնուի :

## Ո՞ր Հետներուն բնութիւնը :

Բ .

Բարութական վրայ գրող մատե-  
նագիրներ դիտած են , որ մարդ-  
կային ձարտարմութիւնը սրելու հա-  
մար՝ Աստուծոյ նախախնամութիւնը  
կարդ դրեր է , որ մեր ամէն օրուան  
կերակուրը առանց ծանր նեղութե-  
ու աշխատութեան չպատրաստուի :  
Ոյտչուններու և անասուններու որ-  
սորդութիւնը , ձկնորսութեան տե-  
սակ տեսակ արուեստները , ու եր-  
կրագործութեան այլ և այլ կերպերը ,  
հարկաւոր զբաղանքներ են՝ որ անով  
շատ մարդիկ իրենց գործք մը կը գրտ-  
նեն : Ոյտէ որ անասուններուն վրայ  
նայինք , կը տեսնենք որ ամէն մէկը  
սաստիկ աշխատանքով կ'անցընեն  
կեանքերնին , որպէս զի իրենց կամ  
իրենց ձագերուն համար հարկաւոր  
ապրուստը ձարեն : Իրենց բոլոր զբա-  
ղանքն է իրենք զիրենք պահել : Ուս-  
տի դատարկ մարդը աշխարհքիս մէջ  
հրէշ մըն է : Չորս դին բոլոր բնու-  
թիւնը գործքի հետ է . ամէն կեն-  
դանի այնպիսի մարդը կը յանդիմա-  
նեն . Այնպիսի մարդն որ ուրիշ-  
ներուն վրայ ընկած բեռ մըն է , որ  
ոչ հասարակաց հարստութիւնն ա-  
ւելցընելու հոգ ունի , և ոչ զինքը ու  
իր ընտանիքը պահելու հոգ ունի ,  
թող նայի թէ նախախնամութիւնը  
մըջիւնին ինչ բնութիւն տուեր է ,  
որ բանական կենդանիներու օրինակ  
կ'ըլլայ : Աս բանս անցեալ շաբթուան  
տետրին մէջը բացատրած է զարմա-

նալի կերպով . ան պատմութեան մնա-  
ցածն ալ՝ աս ետեի ըսելիքս է :

Հորեննոցն որ գոցեցի , իմմըջիւն-  
ներս իրենց ապրուստը գանելու հա-  
մար նեղը մտան . վասն զի իրենց պա-  
շարը ան ցորեննոցէն կը հոգային :  
Ա երջապէս տեսնելով որ իրենց հա-  
մար զիզած ցորենս դեռ երկան ատեն  
պէտք էր որ գտնէին , միտքս դրի որ  
իրենց իմացընեմ :

Որպէս զի իմանամ թէ որչափի կը  
հասնի ասոնց ձարտարմութիւնը ,  
հնարք մը մտածեցի՝ որ լաւ յաջողե-  
ցաւ : Իանը անհաւատալի կ'երենայ  
անոնց որ չեն գիտեր՝ թէ ան կենդա-  
նիներն որ նոյն տեսակէն ընկերու-  
թեամբ կ'ապրին , ուրիշ կենդանինե-  
րէն աւելի աչքաբաց են : Աւելի մեծ  
մըջիւններէն մէկն առի , ու ցորենի  
դէզին վրայ ձգեցի . Այնչափ ուրա-  
խացաւ ձեռքէս ազատելուն վրայ , որ  
առանց ցորեն մը առնելու մէկէն իր  
բոյնը վազեց . բայց հոն ցորեն ըլլալը  
դիտեր է . վասն զի ժամէ մը ետե բոլոր  
իմմըջիւններս հոն իրենց պաշար ըլ-  
լալը իմացեր էին . և տեսայ որ շատե-  
րը հոն դրած ցորենս կրելու զբաղած  
էին : Վեզի կը թողում մտածել՝ թէ  
արգեօք չենք կրնար ըսել որ իրենց  
ծանօթութիւնը իրարու իմացըներու  
ձամբայ մը ունին . չէ նէ ինչպէս մէկ  
կամ երկու ժամէն ետե կրնային ի-  
մանալ որ հոն տեղը ցորեն կայ : Հո-  
րենը շուտ մը լմբնցաւ . ես ալ նորէն  
դրի , բայց աւելի քիչ՝ որպէս զի լաւ  
իմանամ թէ իրենց բուն ախորժը ,  
կամ հրաշալի ագահութիւնը որչափ  
է . վասն զի չեմ տարակուսիր որ ձմե-  
ռուան համար ալ պաշար կը դիզէն :  
Ուրիք գըքին մէջ ալ կը կարդանք նոյն  
բանը . բիւրաւոր փորձեր ալ նոյն բա-  
նը կը սորվեցընեն , և չեմ կարծեր որ  
մէկը փորձ մը ըրած ըլլայ՝ որ հակա-  
ռակը ցուցընէ :

Աւաջ ըսի թէ ան մնտուկին կամ  
պարտէզիկին մէջը մըջիւնի իրեք բոյն  
կար , որ կրնանք ըսել թէ իրեք այլ և  
այլ քաղաքներ էին . կառավարութէ

օրէնքնին մէկ , նոյն կարգը կըպա-  
հէին ու նոյն սովորութիւնները :  
Ի՞այց աս տարբերութիւնը կար որ  
մէկուն բնակիչները քովիններէն ա-  
ւելի շատգէտ ու աւելի ճարտար կ'ե-  
րենային . ան բոյնին մըջիւնները աւե-  
լի լաւ կարգ ունէին . իրենց ցորենը  
աւելի ազնիւ էր , իրենց պաշարը ա-  
ւելի շատ , բնակիչներուն թիւն ալ ա-  
ւելի , ու աւելի խոշոր ու զօրաւոր  
էին : Ի՞նիկայ գլխաւոր ու մեծ բոյնն  
էր : Ո՞անաւանդ թէ դիտեցի որ ան  
մըջիւնները մէկաններէն աւելի վեր  
էին , ու անոնց վրայ իշխանութիւն  
մ'ալ ունէին :

ՈՒէպէտ ան հողովլեցուն սնտուկն  
որ մըջիւնները իրենց տեղիներ էին՝  
սովորաբար անձրեւէ ազատ կըմնար ,  
բայց երբոր հով մը փէր , ան ատենը  
անոր վրան ալ անձրեւ կուգար : Ի՞ս  
բանս մըջիւններուն շատ նեղութիւն  
կուտար . վասն զի մըջիւնը ջուրէ կը  
վախնայ : Պաշար փնտռելու համար  
երկայն ճամբայ որ ընեն , ու անձրեւի  
բռնուին , կղմինտրի մը կամուրիշբա-  
նի մը տակ կըպահուըտին , ու մինչեւ  
որ անձրեւը ըդադրի՝ դուրս չեն ելլեր :  
Ի՞նոր համար շատ անգամ մըջիւնը  
կղմինտրներու տակ կը գտնուի , որ ան-  
ձրեւէն ազատ մնայ : Ո՞իշտ իրենց բոյնը  
ան կղմինտրներուն տակը ծածկուած  
կըմնան , առանց ուրիշնեղութեն մը ,  
ու իրենց ցորենն ու չոր հողին կտո-  
րուանքը կղմինտրին չորս դին արեւը կը  
փռեն . ինչպէս որ մարդ ամէն օր կըր-  
նայ տեսնել : Պաշաւոր բոյնին մըջիւն-  
ները անձրեւէն ազատելու համար զար-  
մանալի հնարք մը գտան : Լակուղքա-  
րի պատիկ տափակ կտոր մը կար . ցորե-  
կը երբոր իմանային թէ կրնայ անձրեւ  
դալ , կը բերէին բոյնին ծակին վրայ կը  
գնէին . իսկ գիշերը գրեթէ միշտ : Հի-  
սունի մը չափաւելի զօրաւորներէնքա-  
րի կտորին չորս դին շարուեցան , ու  
միակերպ զարմանալի կարգաւ մը քա-  
շեցին տարինքարը : Ի՞ւաւոտները մէկ-  
դի կը շարժէին . և շատ զարմանալի  
տեսնելու բան էր երբոր աս գործքին

կը զբաղէին : Ի՞ոյնին եզերքը գետինը  
խորտութորտ ըրեր էին . անանկ որքա-  
րը գետնին վրայ տափակ չէր կենար ,  
հապա տակէն կ'անցնուէր : Ո՞էկալ  
երկու բոյներուն մըջիւնները չկրցան  
այնպէս աղէկ անձրեւէն ազատ մնալ .  
իրենց բոյնին ծակին բերանը վրայէ  
վրայ հին ու չոր շաղախի կտորներ կը  
դիզէին . բայց անովլ ալ անձրեւէն ա-  
զատ չէին մնար , ու երկորդգ օրը ե-  
ղած վնասին ճար ընելու համար չա-  
րաչար կ'աշխատէին : Երկու բոյներն  
որ անձրեւէն նեղութիւն կըքաշէին՝  
վրանին լաւ մը ծածկեցի . իսկ գլխա-  
ւոր բոյնը օգնականութեան կարօ-  
տութիւն չունէր , ուստի անոր վրայ  
հոգ չըրի :

Տըլա լ ուպէր՝ Աիհամայ վրայ գը-  
րուածքին մէջ կ'ըսէ , թէ ան տէրու-  
թեան մէկ կողմը որ շատ ջուր կը  
կոխէ՝ մըջիւնները իրենց բոյնը ծառե-  
րուն վրայ կը դնեն . ուրիշ տեղ մըջիւ-  
նի բոյն մը գտնելն անկարելի է : Ու-  
րիշինչ որ կ'ըսէ աս հեղինակը մըջիւն-  
ներու վրայ հարկ չէ հոսյիշելը . ու-  
զողը իր գրուածքը կրնայ գտնել :

Հետաքրքրական փորձ մը ըրի ան  
տեղն որ աս իրեք մըջիւնի բոյները  
կային : Չորրորդ բոյն մըն ալշինեցի ,  
և աս կերպով յաջողեցաւ : Հովանո-  
ցի մը մէջ , մնտուկէն շատ հեռու ,  
ծակ մը գտայ , մէջը լեցուն մըջիւն ,  
որ մինչեւ հիմայ բոլոր տեսածներէս ա-  
ւելի խոշոր էին . բայց շատ ցորեն չու-  
նէին , ու կառավարութիւննին ալլաւ  
չէր : Վնտուկին մէջը մըջիւնի բոյնի  
նման ծակ մը բացի . իբր թէ նոր քա-  
ղաքի մը հիմ դրի . ետքը հովանոցը  
եղած բոյնէն որչափ որ կրցայ մըջիւն  
առի , ու շիշի մը մէջ դրի , որպէս զի  
մնտուկիս մէջ իրենց նոր բնակարան  
տամ . ու որովհետեւ կը վախնայի որ  
չըլլայ թէ նորէն հովանոցը գառնան ,  
իրենց հին բոյնը աւրեցի՝ ծակը տաք  
ջուր լեցընելով , որպէս զի մէջի մնա-  
ցած մըջիւնները մեռնին : Լաքը շիշին  
մէջի մըջիւնները նոր ծակին մէջը լե-  
ցուցի , բայց ամէնն ալդուրս կը փախ-

էկին : Արկու ժամ քըըշեց , բոլորն ալ դուրս ելան . ասով կարծեցի թէ իմ մնտուկիս մէջը անկարելի է չորրորդ բոյն մ'ալշինել :

Արկու իրեք օրէն ետև գիպուածով հովանոցը գնացի , ու շատ զարմացայ երբոր տեսայ՝ որ իմ աւրած բոյնս մըջիւնները վարպետութեամք նորոգեր էին : Ո՞իտքս դրի որ ան բոյնը նորէն բոլորովին ջնջեմ , ու նոյն մըջիւններուն բնակարանը իմ մնտուկիս մէջը փոխադրեմ : Այս մտածութիւնը առաջ տանելու համար իրենց բոյնին բերանը քիչ մը վառօդ ու ծըծումք դրի ու կրակ տուի , բոլոր բոյնը տակն ու վրայ եղաւ . ետքը որչափ որ կրցայ՝ մըջիւններէն բռնեցի , ու զած տեղս բերի : Այս օրը շատ անձրեստ որ մը հանդիպեցաւ , ու բոլոր գիշերը անձրես եկաւ . ան պատճառաւ բոլոր անձրեսին ատենը նոր բոյնին մէջը մնացին : Առաւօտը անձրեն որ դադրեր էր , ան մըջիւններէն շատերը կնացին որ իրենց առջի բնակարանը կարգի դնեն . բայց նայեցան որ վառօդին ու ծծումքին հոտին պատճառաւ հոն չէին կրնար կենալ , վասն զի ան հոտը զիրենք կը սպաննէ . ետ դարձան , և ուր որ կ'ուզէի որ կենան՝ հոն դադրեցան կեցան : Ուտ մը դրացիներնուն հետ ձանըորութիւնին , և բոյնին դուրս ամէն կերպ օգնութիւն գտան անոնցմէ : Ասկ բոյնին ներսի բաները միայն իրենց կ'իյնայ . աս բանս իրենց մէջ անփոփոխելի օրէնք է :

Ո՞րջիւնը իր բոյնին զատ ուրիշ բոյն չերթար . ու թէ որ յանդգնի երթայ , պէտք է որ ետ դառնայ , ու խստութեամք կը պատժուի : Ուտ անդամ մըջիւն մը իր բոյնին առեր ուրիշ բոյն մը դրեր եմ , բայց մէկէն դուրս եկերէ , երկու իրեք մըջիւն ալ զինքը հալածեր են : Այս մըջիւնով շատ անդամնոյն փորձը ըրի . բայց ետքը ետքը մէկալ մըջիւններուն համբերութիւնը հատաւ , ու խեղճ մըջիւնը սպաննեցին : Ուտ անդամմատուը-

ներովս մըջիւններ վախցուցեր եմ , ու զիրենք դէպ 'ի մէկալ բոյնը քշեր եմ , իրենց ձամքուն արդելք ըլլալով որ իրենց բոյնը չերթան : Ուտ դիւրին էր իրենց ուրիշ բոյն մը փախչիլը : Ուտ մարդ այսչափ զգուշաւոր ըլլալը . ու թէ որ վրան աւազակներ վազեն՝ ինքը զինքը պատուհանէն ալ վար կը ձգէ կամ ջրհորը կընետէ . բայց մըջիւնները կը զգուշանան որ օտար բոյն չերթան , ու ազատելու համար ուրիշ ամէն հնարք կ'ընեն : Այտքի նեղն որ իյնան , ան ատենը միայն ուրիշ բոյն կ'երթան . երեմն ալ , ինչպէս շատ անգամ փորձեր եմ , յանձն կ'առնուն ձեռք իյնալ : Ուտի աս միջատներուն անփոփոխելի օրէնք է որ իրենց բոյնէն զատ ուրիշ բոյն չերթան : Հիւրընկալութիւն չունին . բայց իրենց բոյնէն դուրս պատրաստ են ուրիշի ամէն օգնութիւն ընելու : Իրենց կրած բեռը դրացիին բոյնին բերանը կը դնեն , ու ան բոյնին մըջիւններն ալ ներս կը կրեն :

Իրենց մէջ տեսակ մը առուտուր ալ ունին , ու իրաւ չէ թէ աս կենդանիները փոխ տալ չեն գիտեր . ես հակառակը տեսեր եմ : Իրենց ցորենը փոխ կուտան , փոփոխութիւն կ'ընեն , միշտ պատրաստ են իրարու ծառայութիւն ընելու , ու կրնամ ապահովապէս ըսել՝ թէ ժամանակ ու համբերութիւն որ ունենայի , ուրիշ բիւր բաներ կրնայի տեսնել ըսածներէս աւելի հետաքրքրական ու աւելի զարմանալի : Օ որ օրինակ ինչպէս իրենց փոխը կուտան ու ետ կ'առնեն . արդեօք որչափ որ տուած են՝ չէ նէ վաշխով կ'առնեն . արդեօք օտարականներն որ իրենց կը ծառայեն՝ անոնց վարձք մը կուտան թէ չէ : Չեմ կարծեր որ բոլոր աս բաներս քննելը անկարելի ըլլայ . շատ հետաքրքրական բան է իմանալը թէ ինչ սկզբան վրայ իրենք զիրենք կը կառավարեն : Աւրելի է որ աս ծանօթութիւնը մեղի ալ օգտակար ըլլայ : Ուշնամի չունին որ վրանին վազէ ,

ինչպէս որ մեղուներուն համար ալ կ'ըսուի : Ոյուչուններէն միայն վախ ունին , որ երբոր իրենց ցորենը արեր փուեն՝ կուգան կ'ուտեն . բայց դողերէ վախ մը որ ունենան , հողին տակը կը պահեն : Կ'ըսուի թէ թռչուն կայ որ մըջիւն կ'ուտէ . բայց ես ատ բանը ամենեին չտեսայ : Անը որդերն ալ մըջիւններուն նեղութիւն կուտան . բայց մըջիւնները զանոնք դուրս կը հանեն ու կը սպաննեն : Դիտեր եմ որ ան մըջիւններն որ կ'երենայ թէ իրենց պարտքը չեն կատարեր՝ կը պատժեն , երբեմն կը սպաննեն ալ . որ մէկ հեղ մը աս կերպով ըրին . իրեք չորս մըջիւն մէկուն վրայ ընկան , այնչափ չորս դիէնքաշքրուտեցին՝ որ կտոր կտոր ըրին : Ինդհանրապէս խօսելով շատ խաղաղ են . ասկէ կը մակաբերեմ թէ մէջերնին շատ խիստ կարգաւորութիւն պիտի ըլլայ , որպէս զի ան հանդարտութիւն պահուի . կամ թէ մէջերնին ուրիշ կարգաւորութիւն մը չկայ նէ , շատ խաղաղասէրպիտի ըլլան բնութք :

Ուրիշ ո՞ր հասարակապետութեան մէջ աւելի մեծ միաբանութիւն եղեր է : Անդիւնին ամէն բան հասարակաց է , որ մէկ ուրիշ տեղ մը չենք կը նար տեսնել : Անդուններուն համար այնչափ զարմանալի բաներ կը պատմուին . բայց ամէն մէկը մեղուանոցին մէջ զատ բջիջ ունի . իրենց շինած մեղը իրենցն է . ամէն մեղու իրեն բանը կը մտածէ : Ուրիշ ամէն կենդանիներուն վրայ ալնոյն բանը կը ընանք ըսել . շատ անգամ իրարու հեռագատերազմ կ'ընեն , որ իրարու ձեռքէն իրարու ունեցածը առնեն : Բայց մըջիւնները ասանկ չեն . ամեննեին իրենց առանձին բան չունին . ան ցորենի հատիկն որ մըջիւնը բոյնը կը տանի , հասարակաց համբարանոցը կը պահուի . առանձին իրեն համար չէ , հապա բոլորին համար . հասարակաց ու առանձնական շահու զանազանութիւն չկայ մէջերնին : Անդիւնը իրեն համար չաշխատիր , հապա ընկերութեան համար :

Իրենց ինչ թշուառութիւն որ հանդիպի , ջանքով ու ճարտարու . թեամբ դեղը կը գտնեն , ու բան չըկայ որ զիրենք յուսահատցընէ : Ոյէ որ իրենց բոյնը աւրես , երկու օրուան մէջ կը նորոգեն : Ամէն մարդ գիտէ թէ որ զիրենք դուրս վարնտելը , մինչև որ չարդես . վասն զի թէ որ քանի մը հատ միայն ալ մնան , իրենց տեղերնէն չեն հեռանար :

Անդիւն հիմայ մոռցայ ըսելու թէ փորձուած է՝ որ սնդիկը մըջիւններու մահաբեր թոյն է , և զիրենք ջարդելու համար մէկ հատիկ ազգու հնարք ան է : Անդ բանիս վրայօք մըջիւններուն բան մը կը նամամ ընել . կարելի է թէ քիչ ատենէն լսէք որ սնդիկի ալ զիրենք վարժեցուցեր եմ :

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

Դարրյական դաստիարակութեան մէջ եղած սխալներներուն վրայ , և նէ ինչ էրուն առաջը առաջը է :

Բ . Անհանհեմ էրութիւր , որոնց գլխաւորները ասոնք են .

Կ . Անհամբերութեան , որ շատ անգամտղան բան մը ընելուն պէս՝ յանդիմանելով կը պատժեն : Ոյէպէտ և տղայ մը մեծ յանցանք մըն ալ ըրած ըլլայ , միշտ անուշութեամբ խրատելու է . անով տղաքն ալ կ'ըլլան հեղ , և ուրիշներուն վրայ գութ ունեցող :

Հ . Անհաւոր սէր , կամ հողնաւիրութիւն , որով ծնողք կամ վարժապետք աս կամ ան տղան ուրիշներէն աւելի կը սիրեն : Անդ բանիս գէշ հետեանքը ան է որ սիրելի եղած տղան միտքը կը դնէ թէ ինքը զարմանալի կատարելութիւններ ունի , և անոր համար սիրելի է . անով ուրիշներուն վրայ կը գուղանայ , և կ'ուզէ որ ամէն ըսաթեան համար :